

## ՎԱՆԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ



### ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՕՐԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՐԳ. ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվել է իրավաբանական պատասխանատվության, օրինականության և իրավակարգի փոխհարաբերակցության հետ կապված տեսական և կիրառական հիմնախնդիրները:

**Հիմնարարեր՝ իրավաբանական պատասխանատվություն, օրինականություն, իրավակարգ, փոխհարաբերակցություն, տեսական, կիրառական:**

Իրավակիրառ և իրավակարգավորող գործընթացներում խիստ կարևորվում է իրավաբանական պատասխանատվության, օրինականության և իրավակարգի փոխհարաբերակցության հիմնախնդիրների պարզաբանումը, որն ունի ոչ միայն տեսական, այլև զգայի կիրառական նշանակություն:

Միայն իրավունքի իրականացման գործընթացի գիտական վերլուծությունը կնպաստի օրինականության և իրավակարգի կատարելագործմանը և ամրապնդմանը:

Մեզ թվում է, թե իրավաիրականացման գործընթացը արգելակվում է նաև նրանով, որ իրավաբանական գրականության մեջ բավարար հստակություն չկա օրինականության և իրավակարգի հասկացությունների սահմանազատման մեջ: Երբեմն օրինականությունը դիտարկվում է շատ լայն, դրա հասկացության մեջ ընդգրկվում են ոչ միայն ըստ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պահպանության, կիրառության և օգտագործման պահանջները, այլ նաև պետության ամբողջ օրենսդրական գործունեությունը և հենց օրենքը: Անկասկած, օրինականությունը անմիջական կապված է օրենքի և, հետևաբար, օրենսդրական գործունեության հետ: Օրինականության պահանջները հիմնանության մեջ նշանակած է պատկերացնել օրենքների բացակայության դեպքում, ինչպես նաև օրենսդրական գործունեությունը կկորցնի որևէ իմաստ, եթե գործունեության արդյունքում ստեղծված օրենքները չիրականացվեն կյանքում: Օրենքները և ենթաօրենսդրական ակտերը համախմբում, ձևավորում են օրինականության հիմքը:

ՀՀ փոփոխված Սահմանադրության 6-րդ հոդվածում հստակորեն ամրագրված է օրինականու-

թյան սկրունքի բովանդակությունը. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

2. Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

3. Օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում սահմանված կարգով իրապարակվելուց հետո»<sup>1</sup>:

Միևնույն ժամանակ օրինականության պահանջները տարածվում են ոչ միայն օրենքի իրականացման գործընթացների, այլ դրանց ստեղծման վրա: Հստ օրենքի՝ ստեղծման գործունեությունը իրականացվում է օրենքով հաստատված և խորհրդարանով կարգավորվող որոշակի կազմակերպչական ձևերում, այլ խոսքերով, օրենսդրական գործընթացը կարգավորված է համապատասխան իրավական նորմատիվներով: Օրինականության պահանջները տարածվում են նաև օրենսդրական գործունեության այլ պահերի վրա (օրինակ, իրավական համակարգում օրենքի առաջնության հաստատում, ըստ իրենց իրավական ուժի իրավական ակտերի աստիճանակարգության<sup>2</sup>, նոր իրավական ակտերի իրապարակման, գործող իրավական ակտերի փոփոխման, հստակեցման կամ չեղյալացման պատեհաժամություն և այլն):

Այս պահանջներից շատերը օրինականորեն արտահայտված են հենց օրենքներում: Սակայն

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

օրենքի ստեղծման, օրենքի և օրինականության՝ որպես նույնակարգ երևույթների սերտ կապը հիմք չէ դրանց նույնականացման համար: Այսպես, օրենքի ստեղծումը բացի նրանից, որ իրականացվում է օրինականության պահանջներին համապատասխան՝ իրենում ընդգրկում է նաև բազմաթիվ այլ հաճախական գործությունների ճանաչում և կիրառություն, այդ օրինաչափությունների նորմատիվ արտահայտում, տեսական, գործնական և ստեղծագործ գիտելիքների համակցություն և այլն): Հավասարաշափ է նաև օրենքը, որը հաճախ իրենում ընդգրկում է օրինականության այս կամ այն պահանջները, պարունակում է այս կամ այն կոնկրետ հասարակական հարաբերությունների բնույթը սահմանող համապատասխան կանոնները: Ի վերջո, նաև օրինականությունը ոչ միայն տարածվում է օրինաստեղծ գործունեության վրա, այլ նաև իրենում ընդգրկում օրենքում պարտադիր չարգրված պահանջները:

- Օրինականությունը բովանդակային առումով ինքնին օժտված է մի շարք պահանջներով, որոնք հանգում են հետևյալին.

- օրենքների և դրանց հիման վրա հրապարակված այլ իրավական ակտերի անշեղ կատարում և պահանում բոլոր հաստատությունների, կազմակերպությունների, պաշտոնատար և ֆիզիկական անձանց կողմից,

- իրավական ակտերի ստեղծում միայն լիազոր մարմինների կողմից և դրանցից յուրաքանչյուրի սահմանադրական շրջանակներում խիստ եղագածված կոմպենտենցիաներում,

- իրավական ակտերի հրապարակում Սահմանադրությամբ նախատեսված խիստ որոշակի ձևերով,

- իրավական ակտերի համակարգում օրենքի առաջնություն և ենթակա իշխանական և կառավարական մարմինների իրավական ակտերի համապատասխանություն վերին մարմինների իրավական ակտերին,

- ըստ իրենց իրավաբանական ուժի իրավական ակտերի հիերարխիայի ապահովում,

- իրավական ակտերի ընդունում օրենսդրական (և օրինաստեղծ) ընթացակարգի և տեխնիկայի կանոններին համապատասխան,

- օրենքով հաստատված կարգով իրավասում մարմինների կողմից ակտերի պատեհաժամ հրատարակում, փոփոխություն կամ շելյալացում,

- իրավական ակտերի կայունության ապահովում,

- լիազորված մարմինների և պաշտոնատար

անձանց կողմից իրավական ակտերի կիրառություն ընթացակարգային օրենսդրության հետ խիստ համապատասխանությամբ,

- իրավական ակտերի պահպանություն, կիրառություն կամ կատարում,

- իրավական ակտերի ճշգրիտ և միաձև կիրառություն դրանց իմաստի հետ լիարժեք համապատասխանությամբ և օրենսդրությամբ հաստաված կազմակերպչական ձևերի պահպանությամբ,

- իրավական ակտերի կիրառություն այն ժամանությամբ, որոնք նախատեսված են հենց իրավական ակտերով,

- իրավական ակտերի իրականացման ապահովում անհրաժեշտ նյութական, իրավաբանական, հոգևոր միջոցներով և երաշխիքներով,

- իրավական ակտերի կիրառության, պահպանության և իրականացման մշտական հսկողության, ստուգման իրավանացում պետական մարմինների և լիազորված հասարակական կազմակերպությունների, պաշտոնակատար անձանց և քաղաքացիների կողմից:

Օրինականության բերված պահանջները միմյանցից մեկուսացված, խզված չեն, այլ գտնվում են ուղիղ կախվածության մեջ, լրացնում, պայմանագրում են միմյանց՝ հանդես գալով օրենքների և դրանց հիման վրա հրապարակվածների, այլ իրավական ակտերի ճիշտ պահպանության, կատարման և կիրառության միջոցների միասնական համալիրի ձևով: Օրենքների ազդեցության և օրինականության պահանջների պահպանության արդյունքում ստեղծվում և ապահովվում է իրավակարգի ուժիմը: Հնարավոր չէ իրավակարգի առկայություն օրենքների և օրինականության բացակայությամբ, ինչպես նաև օրենքների և օրինականության ստեղծման, գոյության և ազդեցության ինաստը կայանում է հասարակական իրավակարգի հաստատման մեջ:

Չարադրվածի հետ կապված՝ կարևոր և արդիական է ներկայում կանգ առնել երկու հարցերի վրա:

**Առաջինը:** «Թույլատրված է ամենը, ինչ արգելված չէ օրենքով»: Սակայն այս բանաձևը այն էլ ճիշտ չէ, քանի որ, առաջինը, օրենքով արգելվածի սահմաններից դուրս բացարձակ ամենը թույլատրելի չէ, երկրորդը, թույլատրելի է միայն այն, ինչը համապատասխանում է համամարդկային արժեքներին, բարոյականությանը, արդարությանը, անձի և հասարակության ազատությանը: Առավել իմաստուն հանդիսանում է դեռ Զ. Ստ. Միլի կողմից առաջադրված բանաձևը. մարդկանց պետք է թույլատրվի անել ամենը, ինչ ցանկանում

են, այնքան ժամանակ, քանի դեռ դա չի վճառում այլ մարդկանց կամ չի սահմանափակում նրանց իրավունքները :

Երկրորդը: Իրավաբանական գիտության մեջ հատուկ ուշադրություն է պահանջում հանցավորության դեմ պայքարը , հատկապես հասարակական զարգացման անցումային շրջանում դրա սրման և տարածման լնիքացրում: Դա գերադրապես քրեագետների խնդրայնությունն է: Մենք տվյալ դեպքում մտադրված ենք կանգ առնել խնդրի միայն մեկ ասպեկտի վրա: Հայտնի է, որ հանցավորությունը հաճախ ծնում է ինքն իրեն: Հանցավորության կրծատումը ենթադրում է դրա կանխարգելման համակարգված իրականացում, ինչով դժբախտաբար ամենաքիչն է մտահոգված մեր պետությունը (և ամենից առաջ իրավապահ մարմինները): Միևնույն ժամանակ անհրաժեշտ չեն ապացուցել իրավակարգի ռեժիմի կարգավորման համար դրա բացառիկ կարևորությունը և արդիականությունը:

Իրավակարգը՝ գործող օրենսդրության կարգադրագրերին համապատասխանող հասարակության մեջ ձևավորված հասարակական հարաբերությունների վիճակ է: Նա, ով չի պահպանում դրա ռեժիմի կազմակերպման, և պահպանության պահանջները, անկասկած, խախտում է ամբողջ օրենսդրությունը : Նման արարքները ընդունվում են որպես իրավախախտումներ և հանգեցնում իրավախախտման բնույթին հանապատասխանող իրավաբանական պատասխանատվության: Իրավախախտումը և դրա բնույթը նշում են պատասխանատվության ձևը, որին պետք է ենթարկվի հակաիրավական արարք կատարած անձը:

Իրավաբանական պատասխանատվության ձևերի և տեսակների կիրառության կանոնները ու-

նեն կատարելագործման և զարգացման կարիք: Իրավունքի ընդիանուր տեսությունը իրավաբանական պատասխանատվությունը արտահայտել է երկու հիմնական ձևերում իրավավերականգնող և պատմիչ: Երկու տեսակները ծառայում են որպես իրավակարգի պաշտպանության գործիք: Յուրաքանչյուր տեսակը կարող է ունենալ պատասխանատվության իր ձևերը, որոնք անհրաժեշտ է զարգացնել ոլորտային իրավունքում: Ժամանակակից գործնականում հատկապես կարուր է մնում պատասխանատվության իրավավերականգնող ձևը:

Պատասխանատվության այս տեսակի ձևերի սահմանափակ զարգացման հետևանքով բազմաթիվ սուբյեկտներ չեն կարողանում պաշտպանել իրենց իրավունքները:

Իրավակարգը մեծամասամբ կապված է օրենքների բովանդակության, դրանց ձևի հետ: Դրանք պետք է հասանելի լինեն ընկալման համար և արտահայտեն հասարակական հարաբերությունների որոշակի խմբի կարգավորման անհրաժեշտությունը: Երբ իրավաբանական պատասխանատվության կիրառության կանոնները օրենքում հակասական ամրագրված կամ ընդհանրապես բացակայում են, խիստ բարդ է նման օրենքը կյանքի կոչել և հասնել արդարության: Վատ մշակված օրենքների դեպքում՝ ցանկալի և անհրաժեշտ իրավակարգը հաստատել անհնարին է: Օրենքների կապը իրավաբանական, պատասխանատվության և իրավակարգի հետ կրում են օրգանական և փոխակապված բնույթը:

<sup>1</sup> Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն: Երևան, 2015, էջ 12-13:

<sup>2</sup> Սահմանասի տե՛ս, Петров А.А., Шифиров В.М. Предметная иерархия нормативных правовых актов. М., 2014.

<sup>3</sup> Տե՛ս, Чернявский А.Г. Юридическая ответственность. М., 2015, С. 93-94.

<sup>4</sup> Տե՛ս, Мишель Дж. Ст. О свободе. СПб., 1906:

<sup>5</sup> Սահմանասի տե՛ս, Кудрявцев В.Н. Стратегии борьбы с преступностью. М., 2003; Фокс В. Введение в криминологию. Пер. с англ. М., 1980; Кенни К. Основы уголовного права. Пер. с англ. М., 1949; Социальная профилактика правонарушений: советы, рекомендации. М., 1989.

<sup>6</sup> Տե՛ս, Духно Н. А. Юридическая ответственность как способ укрепления правопорядка II Российский следователь. 2012. N19. С. 37-40.

Ванине Овсепян

Соискатель института философии, социологии и права  
Национальной Академии Наук Республики Армения

РЕЗЮМЕ

*Теоретико-прикладные проблемы взаимоотношения юридической  
ответственности, законности и правопорядка.*

В данной статье обстоятельно рассматриваются проблемные аспекты классификации юридической ответственности.

*Ключевые слова:* юридическая ответственность, законность, правопорядок, взаимоотношение, теоретическое, прикладное.

Vanine Hovsepyan

Applicant at the Philosophy, Sociology and Law Institute  
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

SUMMARY

*Legal Liability, Legality, Law and Order  
Problems of Interrelation*

The theoretical and applied problems connected with the interrelation of legal liability, legality, law and order are thoroughly discussed in the present article.

*Keywords:* legal liability, legality, law and order, interrelation, theoretical, applied.